

Եւ որ ի եմին ծովք և լրձակք.  
Ըզնա՝ որչա բազուկք՝ են ծագք  
Լայնատարած Տիեզերաց:

Չո՞ պաշտեսցոք մեք երպիօք. —  
Ըզնա՝ որ զայս մեր երկրագոնտ,  
Եւ զայս երկիրս եղ կարգիսց  
Յանձնիար տեղոջ գեղապատառձ.  
Ըզնա՝ որչա և հաստատեալ —  
Չերկիրն և գերկեց բարձաւս:  
Ըզնա՝ որ եղ, ձշղիս լուսեաց  
Չերկեց շրքեղ հաստատութիւն:

Չո՞ պաշտեսցոք մեք երպիօք. —  
Ըզնա՝ որով որտապոզ  
Հաստեալ երկիրն այս և երկիր՝  
Եւ յայնասփիս տարածեցան:  
Ըզնա իսկ զոր երկիր շրքեղ  
Եւ զոր երկիր միշտ դաւանին՝  
Իշխան իսրահայ Տէր մեծագոր.  
Ըզնա՝ որչա վե՛ն օգնութեամբ՝  
Արփիս պայծառ շողոյ ծագէ,  
Ի երմանէ գիւրն ընկալեալ  
Ըզրոյս և զփոյշ ձաձանկացող:

Թրգմ. ՄԿՐՏԻԷ Յ. ՉՕՐԱՅԱՆ



### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

(Գիտոր ՍՄԲԱՍ Մ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆՑԻ յՕՂԱԾԻ  
առիթով):



Արժանապատիւ խմբագիր Բազմավէպի:  
Չեր պատուման ամառերրի 6 և 7—8  
համարներում կար գետեղում մի ինչ որ ըն-  
գուարանական հուիոյ դոկտոր Սմբատ Մ.  
Գաբրիէլեանցից, Գիտորը նրա գարակի վե-  
րս և դրնչ մի վերին աստիճանի ննասքքիթ  
հարց. եւրոպական եւրոանար բառերի բարդ-  
մանութիւնը. թոյլ տե՛ք ինձ ստել իմ կար-  
ծիրը այդ խնդրի վերաբերմամբ:

Կարելի է մի պատմական իրողութիւն  
նկատել այն՝ որ Թիւրքահայերը և կաւ-  
կասահայերը որպէս իրանց քերականու-

թեան և զրականութեան՝ այսպէս և քա-  
նաշինութեան մէջ ունեցել են մի ինքնու-  
րոյն ուղղութիւն, ընտրել են միմեանցից  
տարբեր ճանապարհներ:

Թիւրքահայերը եղել են առհասարակ  
աւելի լաւ տեղեակ հայերէնի, ազատ լի-  
նելով մի եւրոպական հարեւան ազգի ան-  
միջական ազդեցութիւնից:

Կաւկասահայ ինտելիգենցիան կրում է  
հէնց դպրոցական շրջանում՝ եւրոպական  
ազգերի ազդեցութիւնը. նրա կեանքը այս-  
պէս և նրա լեզուն եղել է աւելի եւրո-  
պական, աւելի միջազգային:

Թիւրքահայը ապրում է քաղաքական  
կեանքից զրկած. կաւկասահայը աւելի  
իրողութիւններով է զբաղում քան նրանց  
արտայայտութեամբ:

Թիւրքահայը մտածում է թէ՛ որպէս  
կարելի է Բիշուրատիսն թարգմանել,  
կաւկասահայը՝ թէ՛ որպէս կարելի է նրան  
բնաշինջ անել:

Կեանքի և պատմական հանգամանքների  
տարբերութիւն:

Կարելի է ուրեմն այդ լեզուական հարցը  
քննութեան առարկայ դարձնել, քանի որ  
նրա աղբիւրը կեանքն է, իսկ կեանքն էլ  
լեզւաբանների կամքից չի կախւած, և  
նրանց կարծիքի մասին հարց չի տալիս:  
Կարելի է. ինտելիգենցիան եղել է այժմ  
մի ոյժ՝ որ ժողովրդական հոսանքների  
վերայ կարող է ազդել:

Բացարձակ դեմոկրատիայի շրջանը,  
լեզուաբանութեան մէջ, արդէն իսկ անցել  
է, և սկսուել է ինտելիգենցիայի, այսպէս  
առած, « բիրտկրատիս » ն, ի հարկէ դեռ  
փոքր չափերով:

Թիւրքահայերը թարգմանում են բառի  
բազաղիչ մասնիկներին. Généologie =  
լիննդաբանութիւն:

Կաւկասահայերը ընդունում են եւրո-  
պական բառը, հնչումները միայն հայաց-  
նելով. Գննեղոյիս:

Սրանցից ո՞րն է ուղիղը:  
Պէտք է ասած՝ որ երկուքն էլ չափա-  
զանցութեան են հասցրած. Թիւրքահայերը  
զրկում են ինքնիրանց միջազգային ստաց-

ւածքներէց, Ռուսահայերը փոխ են առնում այն՝ ինչ որ արդէն իսկ ունեն:

Թիւրքահայերը և Պ. Գարրիէլեանց անտարակոյտ ինձ դատապարտութեան վճով կ'ենթարկեն և ինձ կը նկատեն մի « ազգութեաց », երբ պահանջեմ թէ պէտք է Միևիտոր ասել և ո՛չ Նախարար, Վլայի և ո՛չ կուսակալ, կոնսիւյ և ո՛չ Հիպատոս:

Բայց ես պէտք է ապացուցանեմ այստեղ թէ Սահակ և Մեսրոբն էլ ինձանից տարբիր վերաբերմունք չպէտք է ունենային վերոյիշեալ բաների նկատմամբ:

Սրանք իրաւի կալկասահայերի գրութիւնն են գործադրել, բայց աւելի համարձակ, աւելի գիտակցօրէն քան որքան մենք:

Նոյն հարցը դրուած էր և մեր Ե. դարու գործերի առջ, մանաւանդ որ նրանք պէտք է ստեղծէին, սկիզբ տային Հայ լեզուի. նրանք պաշտօնական անունները ընդունել են՝ օտար ձեւով, առանց թարգմանելու. պէտք է ասած որ այս վերջին փորձն էլ եղել է բայց անաջող անցել: Վերջրէք, օրինակ, եկեղեցական նուիրապետութեան վերաբերեալ բաները:

Վիվկասան գրութեամբ փոխ առնուած բաներ.	Թիւրքահայ գրութեամբ կազմուած բաներ.
Կաթողիկոս	Կաթոլիկոս
Պատրիարք	Հայրապետ
Մետրապօլիտ	
Եպիսկոպոս	Տեսուչ
Արքեպիսկոպոս	
Քորեպիսկոպոս	
Երէջ <sup>1</sup>	

Եկեղեցական այդ բաներից թարգմանուած է միայն Պատրիարք = Հայրապետ. բայց այդ բառը որքան զժբաղլութեանց է ենթարկուել. Հայրապետ ընկել է անորոշութեան մէջ, զրկուել պաշտօնական հանգամանքից, եպիսկոպոսի հումանիշ դարձել. և ժողովների հարիւրաւոր եպիսկոպոսները եղել են միանգամից հայրապետ (= պատրիարք). այս է ահա թարգմանուած պաշտօնական անունների բազրը:

1. Յունարէնից փոխ առնուած բաների մասին հմտ. Հիւլզմանն Armenische Grammatik.

Տեսուչ՝ « եպիսկոպոս »-ի աթոռը չի կարողացել զրաւել և ո՛չ մի անգամ, և ստիպած է եղել գոհ լինելու... դպրոցների վարչութեամբ: Որպիսի միաստութիւն, մեծապատիւ դոկտոր, հրամայել որ Consulը թարգմանենք հիպատոս. (ստեղծք Ձեր յօդուածը, Բարևալիկ, յունիս էջ 263). բայց չէ որ հէնց այս հիպատոս բառը ցոյց է տալիս որ մեր հայերը Ձեզ նման չէին մտածում, այլ ընդունում էին օտար բառը, և թէ հէնց այն պատճառով որ հիպատոս յունական բառը ընդունուել է հայերէնում, կարող ենք և մենք կոնսիւրառն ընդունել, փոխանակ հիպատոսի իմաստը խանգարելու: Գուրջ թոյլ չպիտի տար մի մերենայի եւրոպական անունը գործածել. (լաւ է լուծիւն քան այլազգի բառ). բայց Թիւրքահայ գրագէտները չեն բարեհաճում մտածել թէ հէնց մերենայ բառը մի օտար, մի յունարէն բառ է, և եթէ ընդհանուրը կարող է օտար լինել, ինչո՞ւ ոչ նաեւ մերենայի մանրամասնութիւնները:

Որ Թիւրքահայերի այժմայ գրագէտները լինէին Ս. Սահակի ժամանակ, նրանք պէտք է այս բառարանը կազմէին. Ընդհանոր (= կաթողիկոս), Հայրապետ (= Պատրիարք), Վերապետ (= Եպիսկոպոս), Վերապետապետ (= Արքեպիսկոպոս), Մայրապետապետ (= Մետրապօլիտ) և Բիսկոպոսիոն կամ Մեծմայի տապար պէտք է բամբասէին Ս. Սահակին և Ս. Մետրոբին իբրեւ տգէտներ կամ ատողներ Հայ լեզուի:

Միծաղելի, իրաւի:  
Պաշտօնեաների անուններին այն ժամանակ միայն հայերէն մի բառ ստեղծուելին մեր Հայերը երբ արդէն նրանց համապատասխանը գոյութիւն ունէր իբրեւ արմատ-բառ, ոչ իբրեւ թարգմանութիւն. պրեպիլոյտրի ասում էին քահանայ, դիսկոնի՝ սարկաւազ, բայց սրանք թարգմանութիւններ չեն:

Մեր հին մատենագրեր կազմել էին մի ինչ որ Ակաղեմիա, Վառձապուհի հովաւ վանաւորութեան և Ս. Սահակի նախա-

գահութեան ներքոյ (դրանք մեր Լուի ԺԳ և Ռիշըլիէօն են եղել), և այդ Ակադեմիան, որին Միսրոսիսեան պարոյց են անւանում Թիւրքահայ գիտնականների շրջանակում, շատ վաղ քան Ֆրանսացիները՝ որոշում էր տեւել յունարէնից փոխ առնել այն բուլոր պաշտօնական բառերը որոնց համապատասխան արմատ-բառ գոյութիւն չուներ հայերէնում:

Իրաւունք չունենք մենք էլ շարունակելու նոյն աւանդութիւնը. այդ չէ՞ պահանջում լեզուի միաձեւութեան հարկը. ինչո՞ւ չպէտք է կարողիկոս, Պատրիարք և նման բառերին արտաքսանք հայերէնից՝ իբրեւ օտար, իսկ նորերին՝ այո՛, նոյն իսկ երբ նրանք անհրաժեշտ են լեզուի յստակութեան համար: Որպէս մի ո՛ր և է հոյակապ շէնք իր ճարտարապետութեան մէջ՝ այսպէս լեզուն էլ պէտք է միութիւն ունենայ իր կազմութեան եղանակի մէջ: Չմտածենք աւելի հայ լինել, պարոններ, քան Վրամշակուհի, քան Սահակը:

Կաւկասահայ բառակազմութիւնը ո՛չ միայն յաղթական է երեւում պատմութեան առաջ, այլ մանաւանդ լեզուարանութեան:

Ինչ տարբերութիւն կայ մի հայ և մի օտար-հերոպական հոմանիշ բառի մէջ: Երանք նոյն արմատի տարբեր ձեւով խանգարումներն են յաճախ. ծաղրական չի՞ լինի այս աղաւաղման վրէժխնդիր լինել՝ աւելի քան այն աղաւաղման: Միայն Ե. Գ. Գ. և այլն դարերի Հայերը չեն եղել մեր պատերը, այլ նաեւ աւելի հին դարերի Հայերը. ինչո՞ւ նրանցից գործածուած մի ձեւ (որ կարող է մի ո՛ր և է լեզուի մէջ պահւած լինել) պէտք է նկատուի օտար, դատապարտելի, խորշելի:

Ո՞վ է երաշխաւորում՝ որ այն բառը որին իբր հայկական ենք համարում նա էլ իր կարգին պարսկերէնից առնւած մի բառ չէ, և թէ՛ մենք չենք հաւածում մի օտար բառ բայց եթէ մի այլ օտար բառ ընդունելու համար նրա փոխարէն: Չէ՞ որ թարմ է Consul-Հիւպատոսի յիշատակը:

Մեր հին մատենագրերը պէտք է շատ

գործնական և կեանքի հասկացող մարդիկ եղած լինեն, որ առանց լեզուների խնամութիւնների տեղեակ լինելու, դուռը բաց են արել այն յունարէն բառերի առաջ՝ որ աւելի յստակ բացատրութիւններ էին:

Այն՝ ինչ պատկանում է հերոպական լեզուներին, պատկանում է և մեզ՝ նոյն ընտանիքի անդամներին:

Մեզանից շատերը բաց ի հայկական պաշտօնական անուններից ստիպւած են սովորել և հերոպականներին. ինչո՞ւ աշխատութիւնը կրկնապատկել այնքան մեծ չափերով: Մի քիչ աւելի գործնական լինենք:

Այն բառերը որ մուտք են գտել ո՛չ միայն հերոպական, այլ և սեմական և տուրանեան լեզուների մէջ՝ կարող են հայերէնի էլ մաս կազմել: Չպէտք է զբրկենք մեզ միջազգային ստացւածքներից, անջատուենք համաշխարհային կեդրոնից և մանաւանդ հերոպական մեր ցեղակիցներէ: Այդ կը լինի՛ և՛ մի բարոյական ոյժ և՛ գործնական շահերի աղբիւր հայ ժողովրդի համար:

Ես կարող կը լինէի՛ բաց ի եկեղեցական անուններից մէջ բերել նաեւ քաղաքական պաշտօնեաների անուններ՝ օտարներից փոխ առնւած.

նայար	ՄիՅկիլիտոս
դոմս	Գաղատ
չիւպատոս	Սպաթար
գատրիկ	Քարտուղար

Բայց բաւականանում եմ մատնանիշ անելով ընթերցողներս՝ Հիւպոմանի Գերականութեան վրայ, որտեղ կարող կը լինեն նրանք հայերէնի՛ յունարէնից առած փոխատութիւնները ուսումնասիրել:

Ո՞վ ցանկանում է աշխարհարար բառարանի կազմակերպութեամբ գրադուել, պէտք է նա իւր գործը հիմնէ պատմական-լեզուարանական հիմունքների վրայ. պէտք է նրա աշխատութիւնը գործնական կեանքի համապատասխանող լինի. իսկ գործնական կեանքը, փորձառութիւնը արդէն իսկ գոյութիւն ունի. նոյն իսկ ինքն պատմու-

թիւնն է դա. դիտեցէք ապագան՝ անցեալում:

Հիմնած պատմական իրողութեան վերաբերմամբ որ մեր նախնիները կուսիսանայ դրուամբ են բասերը փոխ ասեում յունտրեկից՝ կրք այդ էր պոստանում յեզի յոտակոտիներ, կամ կրք երա հայերեն բարգմանութեան յէր աշտոնում ժողովրդականութիւն ստանալ, օրինաւոր եմ համարում ընդունել հայերէնում եւրոպական այն ամէն բառերը, որոնց հայկական թարգմանութիւնը կարող է երկրորդի լինել, կամ կարող չլիտի լինի եւրոպական բառի չափ ժողովրդականութիւն ստանալ՝ կեանքի պահանջներից ստիպած:

II.

Գիտեմ որ այս սկզբունքը՝ մի մեծ վըրտանք է սպառնում: Մի անգամ կրք օտար բառեր գործածելու սկզբունքն ընդունեց, այնուհետեւ ամէն գրող իրաւունք կը ստանայ գործածելու նաեւ այն եւրոպական բառերը՝ որոնց համապատասխան հայերէնը կայ բառագրքում, բայց ոչ նաեւ ... նրա մտքում. այս են անում կաւկասահայերից շատերը, և հէնց այս պատճառով իրանց դատը կորցնում:

Ո՛ր միայն պետք է սկզբունքը եշտակել, այլ նաեւ նրա գործադրութեան եղանակը՝ մանրամասն, կետ առ կետ. սկզբունքը՝ ազգաների ձեւերում՝ մի ամենամտանգատր գէրք է:

Այս կանոնի զանցառութեան մէջ է մեր զբաղմունքի մեծ սխալը. զեղծումների առիթ է տալիս այն՝ որ սկզբունքներ ենք տալիս՝ նրանց գործադրութիւնը յանձնելով անվարձների, գեղեցիկ մեքենան՝ մի անարուեստ մարդու:

Ես կը փորձեմ մի բառացուցակ այն բառերի որ պէտք է փոխ անեն եւրոպական լեզուներից կաւկասահայ գրութեամբ:

Շարայարեցի

ԵԱՆ-ԱՐՄԵՆ

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն



«Հայերէն և դրացի լեզուները», Պրոֆ. Դոկտ. Պեդրուբնի, թարգմանեց Հ. Թովմաս կէտիկեան, Վիեննա, 1907, էջ 264, գին՝ ֆր. 5:

Երբ այս գործը սկսաւ Հանդիսին մէջ թարգմանուիլ՝ յետ տարբեր կարծիք յայտնելու խօսիմ բայի մասին քան ինչ որ ունէր հեղինակս, կը գրէի թէ « Ամբողջին վրայ՝ դեռ բոլորը չաւարտած, կարելի չէ դատաստան մ'ընել՝ »: Հիմայ Հ. Թ. կէտիկեան անոր ամբողջական թարգմանութիւնը կու տայ մեզի, վարժ ու յստակ հայերէնով մը, որ, թէեւ քանի մը բարդութիւններ շատ ընտանի չհնչեն, միշտ մեծ յարողակութիւն մը են ինքադրել կու տայ թարգմանչին մէջ:

Ամբողջին բովանդակութիւնը՝ թէեւ յոգնեցնող, բայց միանգամայն մեծապէս հրահանգիչ է լեզուական խնդիրներու մասին: Ազգին մէջ անցողակի կը ծանուցուի թէ հեղինակին տոաջին հայագիտական աշխատասիրութիւնը չէ այս: Փրքին ընթերցուցումն իսկ կը ցուցնէ թէ ուրիշ գրուածներու մէջ ալ ուսումնասիրած պիտի ըլլայ հայերէնը, քանի որ այնքան խոր ծանօթութիւն ունի անոր բառագիտական և քերականական կազմութեան: Իր հետազոտութեանց համար անիկայ ոչ միայն յորդառատ ազբիրներ ունեցած է, այլ և շատ լեզուներու գիտութիւն մը, ինչպէս կը տեսնուի անոնց համառոտագրուած ցանկէն:

Հատորին բուն բովանդակութիւնը կը կազմեն Հայերէնի ձայնակն դրոշման մասին խոսակարգ դիտողութիւններ (3-170), Հայերէնի փոխառնայ բառեր թրքերէնի մէջ (170-205), Հայերէնի յոգնակի կազմաւորումներ:

1. Հմտ. Բազմավէպ, 1905, էջ 192.